ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ

2013 թ. դեկտեմբերի 17-ից 18-ը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում կայացավ արդեն ավանդական՝ «Հայ ժողովրդական մշակույթ 16» գիտական նստաշրջանը՝ նվիրված ազգագրագետ Դերեն Վարդումյանի ծննդյան 90-ամյակին:

Առաջին նիստը, որը վարում էր ինստիտուտի արդիականության ազգագրության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լ. Աբրահամյանը, *սկսվեց հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն* Պ. Ավետիսյանի *բացման խոսքով, որից հետո ինստիտուտի ազգագրության բաժնի վարիչ* Ս. Հոբոսյանը *ներկայացրեց Դերեն Վարդումյանին որպես անձ և գիտնական՝ մասնավորապես նշելով նրա կարևոր ներդրումը հայ ազգագրագիտության զարգացման գործում:*

Գիտական նստաշրջանին ներկայացվել էր 54 զեկուցում, որից ընթերցվեցին ստորև բերված զեկուցումները:

Լ. Վարդանյանի *զեկուցումը նվիրված էր Լոռու ազգագրության ուսումնասիրությանը 1930-ական թվականներին, որը հիմնված էր այդ տարիներին Լոռուց գրառված ազգագրական նյութերի վրա:* Ա. Վարդանյանի *զեկուցումը Քոթանիայի հայ համայնքի երաժշտության մասին էր, որտեղ հիմնականում հետազոտվում էր այս կողմերից Կոմիտասի գրառած հայատառ թուրքերեն երգերը:* Ս. Վարդանյանը *և* Հ. Մարգարյանը *զեկուցեցին «Քրդախոս սիրիահայերի բանահյուսական և ազգագրական ավանդույթները» թեմայով՝ հիմնվելով 2010 թ. Արմավիրի մարզից հավաքած դաշտային հետազոտությունների վրա: Ուսումնասիրության մեջ մեծ տեղ էր հատկացված հատկապես սիրիահայերի ժողովրդական բանավոր ավանդությանը:* Ա. Ամիրխանյանի *զեկուցումը նվիրված էր լոռեցիների հավաքչական գործունեության մեջ սնկի ունեցած դերին և դրանց ժողովրդական ընկալումներին:* Ա. Դաբաղյանի *զեկուցման թեման էր «Արցախի և Սյունիքի ճանապարհները XIX–XX դդ., մշակութային և աշխարհագրական առումները», որտեղ պատմական տարբեր աղբյուրների (ժամանակի գիտական աշխատություններ, քարտեզներ, ճանապարհորդների հուշեր) միջոցով ցույց էր տալիս, թե ինչպիսի կարևորություն են ունեցել հարավկովկասյան տարածաշրջանի համար Արցախով ու Սյունիքով անցնող ճանապարհները:*

Դեկտեմբերի 17-ի 2-րդ նիստը ղեկավարում էր պատմական գիտությունների դոկտոր Լ. Վարդանյանը: *Առաջին զեկուցումը ներկայացրեց Հ. Խառատյանը՝ այժմյան Դերսիմի տարածքում ալևիների կամ զազա-ալևիների ինքնության փնտրտուքը և նրանց մի մասի հայկական արմատների հարցը թեմայով:* Գ. Ստեփանյանի *զեկուցումը նվիրված էր «տան սրբերի» պաշտամուն-*

քին. նա ներկայացրեց, թե ինչպիսի հրաշքների շնորհիվ են «տան սրբերը» հայտնվում տան անդամերին:

Հռ. Ասատրյանը *և* Ն. Շամամյանը *ներկայացրեցին ««Թելի» խորհուրդը հայոց ավադական ճամփու պարերում և խաղերում» զեկուցումը: Հեղինակները փորձել էին ցույց տալ, թե խորհրդանշական ինչպիսի դեր ունի թելը և կծիկը ժողովրդական բանահյուսության մեջ:* Ա. Հակոբյանի *«Տարածք, հիշողություն և ինքնություն ՀՀ Զյունաշող գյուղի փախստական վերաբնակների օրինակով» խորագիրը կրող զեկուցումը պատմական հիշողությունների քննություն էր:*

Դեկտեմբերի 18-ի առաջին նիստը բացվեց Ս. Վարդանյանի *զեկուցումով, որի թեման էր «Հայոց ցեղասպանության մասին գրառումներ կրոնափոխ համշենահայերից»: Հեղինակը դաշտային նյութերի հիման վրա ցույց տվեց, թե ինչպես են համշենահայերը տեղահանվել XX դարասկզբին՝ բերելով նաև մասնավոր պատմություններ և հիշողություններ:* Ս. Մկրտչյանի *զեկուցումը նվիրված էր Վրաստանում տարրական դասարաններում պարերի միջոցով ազգային խորհրդանիշների ստեղծմանը և դրա պրոպագանդմանը՝ «Պարը և արվեստը, որպես ազգային ինքնություն ձևավորող գործիք (Վրաստանում տարրական դպրոցի ուսումնական ծրագրերի և դասագրքերի օրինակով, 2010–2011 թթ.) վերնագրով»: Երիտասարդ գիտաշխատող* Հ. Մելքոնյանը *հանդես եկավ ««Իդեալական հայրենիք» ազգայնության դիսկուրսը գրոսաշրջային արվեստում» զեկուցմամբ, որում խնդիրը քննել էր գրոսաշրջային մշակույթի համատեքստում՝ բերելով բազմաթիվ օրինակներ:* Գ. Աղանյանը *զեկուցում կարդաց «Լոթիության դրսևորումները Ալեքսանդրապոլում» թեմայով:*

Այդ օրվա գիտական նստաշրջանի 2-րդ նիստի զեկուցումները վերաբերում էին բանագիտական հետազոտություններին: Նիստավար Թ. Հայրապետյանի *(բանահյուսության տեքստաբանության բաժնի վարիչ) ելույթը վերաբերում էր հայ ժողովրդական հեքիաթների սյուժեների ու տիպերի համացույցի նախնական տարբերակին (ըստ Ասարնե-Թոմփսոն-Ութերի հեքիաթների միջազգային նշացանկի)՝ ներկայացնելով նախ «միջազգային հեքիաթների տեսակները» եռամաս նշացանկը, ապա հայկական հեքիաթների տիպերի նշացանկերի խմբագրման և համալրման աշխատանքները:*

Ե. Զաքարյանը*, շարունակելով հեքիաթների թեման, ներկայացրեց «Հեքիաթի հերոսի հրաշալի օգնականը և հայոց հարսանիքի քավորը» խորագրով զեկուցումը:* Լ. Ղոեջյանը *ներկայացրեց ժողովրդական ասույթաբանության և ավանդական զրույցների կապը համանուն վերնագրով զեկուցումը:* Ա. Սարգսյանի *զեկուցումը հայ ժողովրդական երգիծական մանրապատումների կապը առակի, ավանդազրույցի և աղոթքի տեսակների մասին էր: Հաջորդ երեք հեղինակները զեկուցումներով անդրադարձան աղվեսի, գայլի և շան կերպարներին:* Լ. Մկրտումյանը *ներկայացրեց հնուց եկող աղվեսի երբեմնի պաշտամունքը, աղվեսի կերպարի երկակի բնույթը, նրա աղերսները պտղաբերության հետ և, վերջապես, աղվեսի կերպարի տրիքստերային գիծը հայկական հեքիաթներում:* Լ. Սահակյանի *ներկայացրած զեկուցումը բացահայտում էր գայլի պաշտամունքը, մասնավորապես, այն, որ գայլը մի շարք ժողովուրդների առասպելներում հանդես է գալիս որպես ծիսական ու հմայական պաշտամունքային կենդանի, որի շուրջ հյուսվել են բազմաթիվ ավանդազրույցներ:*

Ա. Իսրայելյանը *ներկայացրեց շան հմայական գործառույթները հայոց հավատալիքներում:* Ք. Այվազյանը *հանդես եկավ «Մեղքի մասին պատկերացումները հայկական հեքիաթներում» վերնագիրը կրող զեկուցմամբ, որտեղ հայ ժողովրդական հեքիաթներից առանձնացրել էր այն մոտիվները, որոնց հիման վրա ցույց էր տալիս մարդուն բնորոշ մեղանչելու իրողությունները:*

Ընթերցված զեկուցումների շուրջ ծավալվեցին բովանդակալից քննարկումներ:

Նիստն ամփոփեց բանագետ, ինստիտուտի բանահյուսության տեսության և պատմության բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ս. Հարությունյանը*: Նախ նա ներկայացրեց Դերեն Վարդումյանի գիտակազմակերպչական աշխատանքների հիմնական արդյունքները հայ ազգագրության բնագավառում, ապա կարդացված զեկուցումների կապակցությամբ կատարեց երկու ընդհանրացված դիտողություն: Առաջինն այն էր, որ երիտասարդ գիտաշխատողներին խորհուրդ տվեց հետազոտվող խնդիրների առնչությամբ հենվել դասական հեղինակների ձեռք բերած և մատնանշած ցուցումների վրա, նաև հաշվի առնել նորագույն հետազոտողների ստեղծած գիտական արդյունքները, իսկ մյուսն այն էր, որ ժողովրդական առակախոսների՝ Պոլոզ Մուկուճ, Կիրովականցի Ռուբեն, Ծիտրո Ալեք, Ջղեր Խաչիկ և այլ անուններով հասած զրույցները հետազոտելիս միշտ նկատի ունենան բանագիտական այն ընդհանուր սկզբունքը, որ այդ կերպարները նույնությամբ չեն արտացոլել նրանց նախատիպերի պատմականությունը, այլ ստեղծվել են վիպական բանահյուսության յուրահատուկ իդեալականացման և չափազանցեցման ընդհանուր օրինաչափություններով:*

Վերջում նշենք, որ Լևոն Աբրահամյանի և Սուրեն Հոբոսյանի խմբագրությամբ արդեն իսկ լույս են տեսել «Հայ ժողովրդական մշակույթ 16» թեմայով գիտական նստաշրջանի զեկուցումները՝ «Ավանդականը և արդիականը» *ընդհանուր խորագրով:*

ԱՆՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ,
ՍՄԲԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ